

Բանալի բառեր՝ ապահովագրություն, գյուղատնտեսություն, գյուղացիական տնտեսություն, բնական աղետներ, բարեփոխումներ, ներդրում:

**ՀՏԴ 368.5**

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ատենախոսության թեմա՝  
**Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության  
հիմնախնդիրները և լուծման ուղիները ԳԳ-ում**

**Հեղինակ ՌՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
ՀՀ ԳԱԱ Մ. Զոթայանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի հայցորդ

Գիտական դեկավար՝  
**Աշոտ ԲԱՅԱՂՅԱՆ**  
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գյուղատնտեսությունը եղել և մնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության առանցքային ոլորտերից մեկը: Հանրապետության 915 համայնքներից 866-ը գյուղական է, և այստեղ բնակվում է հանրապետության ընդհանուր բնակչության շուրջ 36%-ը: Գյուղացիական տնտեսություններում զբաղված է ավելի քան 500 հազար մարդ կամ տնտեսապես ակտիվ բնակչության մոտ 44%-ը:<sup>1</sup> Գյուղական վայրերում ապրուստի միջոցը, պարենային ապահովությունն ու համայնքի զարգացումը ապահովում է բացառապես գյուղատնտեսական ոլորտը: Գյուղի բնակչության եկամուտների գերակշիռ մասը ստացվում է գյուղատնտեսական արտադրությունից և գյուղատնտեսության մեջ վարձու աշխատանքից: Գյուղատնտեսական արտադրությունը ներկայումս իրականացվում է ավելի քան 1200 հազար մասնատված հողակտորների վրա: Ընդ որում, գյուղացիական տնտեսությունների (ընտանեկան տնտեսությունների) կողմից արտադրվող գյուղատնտեսական մթերքի տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքում կազմում է 97.2%<sup>2</sup>: Սա վկայում է կազմակերպարարական այլ ձևերով տնտեսավարողների համար գյուղատնտեսության ոլորտի դեռևս ոչ բավարար ներդրումային գրավչության մասին: Ենթադրելի է, որ գյուղում աղքատության մակարդակը մեծապես պայմանավորված է գյուղատնտեսության զարգացման վիճակով:

1994թ. կեսերին Հայաստանի Հանրապետությունում ավարտվեցին անկախությունից հետո սկսված հողային բարեփոխումները, որի արդյունքում սեփականաշնորհվեցին գյուղատնտեսական հողերի մեծ մասը: Վերջինիս արդյունքը եղավ այն, որ ստեղծվեցին 340 հազ. մասնավոր գյուղացիական տնտեսություններ. պետական կողմից գյուղատնտեսությունից անցում կատարվեց փոքր գյուղական համայնքների: Բարեփոխումները հիմք դրեցին ներկայիս բազմաթիվ խնդիրների, որոնք առաջացան գյուղատնտեսության կազմակերպման գործընթացի ոչ ճիշտ պատկերացման, գյուղտնտեսական պակասի և այլ պատճառներով: Տվյալ փոփոխությունների արդյունքում այժմ աճեցվում է կրկնակի անգամ պակաս բերք՝ հորիզոնային Միության տարիների համեմատ, չեն օգտագործվում գյուղատնտեսական նշանակության հողերի 23.7%-ը, ցանքատարածությունների 21.2%-ը: Ցանքատարածությունների չօգտագործման գլխավոր պատճառներից մեկը հայ-արդրեջանական սահմանին մոտ գտնվելն է, քանի որ տարածքը ակադեմիայական գլխավոր պատճառներից մեկը է և վտանգավոր է: Հողատարածքների որոշ մասն էլ սկսեցին չմշակվել՝ բնակավայրերից չափազանց հեռու գտնվելու, գյուղատնտեսությամբ զբաղվելու համար փոքր լինելու պատճառով:

Անկախացումից հետո առաջ քաշված մյուս կարևոր խնդիրներից է հողերի ոռոգման խնդիրը: հորիզոնային տարիների համեմատ՝ նորանկախ Հայաստանում ոռոգման համակարգը կրճատվեց մոտ 116 հազ. հա-ով՝ կազմելով 200 հազ. հողատարածք, որոնք էլ ոչ ամբողջությամբ են ոռոգվում: Սրա պատճառն այն է, որ Հայաստանում առկա ոռոգման ջրագծերի հիմնական մասը կառուցվել է դեռևս խորհրդային տարիներին և ունի մշակվածության բարձր աստիճան: Չնայած միջազգային կառույցների ֆինանսավորմամբ կատարված վերականգնողական աշխատանքներին՝ մասնագետներն այժմ էլ հայտնում են, որ ոռոգման ժամանակ ջրի կորուստը շարունակում է կազմել մոտ 50%:

Վերոնշյալ և բազմաթիվ այլ խնդիրների արդյունքում, շուրջ 437 հազար հեկտար ցանքատարածություններից մշակվում են ընդամենը 318 հազարը:<sup>3</sup> Դա նշանակում է, որ մոտ 120 հազար հեկտարը անմշակ վիճակում են, ինչը կարող է վերարտադրության խնդիրներ առաջացնել:

Գյուղացիներն էլ ունեն հողը չմշակելու իրենց հիմնավորումները. նրանք գյուղատնտեսությամբ զբաղվելու փոխարեն գերադասում են մեկնել արտագնա աշխատանքի, քանի որ հողատարածքն այսօր շատերի համար դարձել է մի հողակտոր, որից կանոնավոր եկամուտ ստանալը բարդ գործընթաց է: Ապահովագրված չլինելով բնական աղետներից՝ գյուղացին վստահ չէ, որ ստացված արդյունքով կծածկի իր բոլոր ծախսերը՝ սերմերի և թունաքիմիկատների արժեքը, գյուղտնտեսական վարձակալությունը, ոռոգման ջրի սակագինը, հողի հարկը և այլն:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր /Բավելված ԳԳ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշման/

<sup>2</sup> Հայաստանի հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հ ա յ է ց ա կ ա ր գ

<sup>3</sup> Հ ա շ Վ Ե տ ո լ ո թ յ ու ն Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ

Հայաստանյան արտադրողները նույնպես կանգնած են մի շարք մարտահրավերների առջև, որպեսզի ապահովեն իրենց եկամուտը, միևնույն ժամանակ տնտեսական ներդրում ունենան հանրապետության գյուղատնտեսության ոլորտի զարգացման գործում:

Որպես օրինակ վերցնենք նախորդ տարվա տվյալները, երբ գյուղատնտեսության ոլորտը Հայաստանում սկսեց անկում գրանցել: Գյուղատնտեսության նախարարությունն անկումը բացատրեց եղանակային անբարենպաստ պայմաններով, որի պատճառով գյուղացիները բերքահավաքը կատարեցին ոչ թե հոկտեմբերին, այլ այն հետաձգվեց մինչև նոյեմբեր: Սակայն ոլորտում առկա տարեկան պատերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված հիմնավորումն արդարացուն է միայն տվյալ ժամանակահատվածը, բայց ոչ՝ որը տարին: 2016թ. գյուղատնտեսության չափաբաժինը հանրապետության ՀՆԱ-ում կազմում է մոտ 16%, այնինչ՝ 2015թ. կազմել է 17,3%: Գյուղատնտեսության՝ ՀՆԱ-ի հավելածին նպաստման չափը, ըստ վիճակագրական տվյալների, կազմում է -1 (միևնույն մեկ): Սա նշանակում է, որ գյուղատնտեսությունը չի նպաստել ՀՆԱ-ի աճին: Գյուղատնտեսության զարգացման տեմպերի դանդաղումն էապես ազդել է նաև տնտեսական աճի վրա: 2016թ. այն կազմել է ընդամենը 0,5%՝ նախատեսված 2,2%-ի փոխարեն: Գյուղատնտեսական արտադրանքի ծավալը կրճատվել է 5,2%-ով, իսկ բուսաբուծական արտադրանքինը՝ 11,7%-ով:<sup>4</sup>

Հայաստանի գյուղատնտեսության զարգացումը ուղիղ կապ ունի նաև հանրապետության աշխարհագրական դիրքի, ըստ այդմ էլ՝ տարածաշրջանի բնակլիմայական առանձնահատկությունների հետ: Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է բնական աղետների միջին կամ բարձր ռիսկային գոտում: Հայաստանն ունի երաշտների և ջրային ռեսուրսների անհամաչափ բաշխվածություն, որը բնորոշ է լեռնային ռելիեֆ ունեցող երկրներին: Ենթարկվելով երրորդային և տարերային աղետների՝ երկիրն առավել զգայուն է կլիմայական անբարենպաստ փոփոխությունների նկատմամբ՝ խոցելի դարձնելով գյուղական բնակչության ապրուստի միջոցները:

Ցրտահարությունների, կարկտահարությունների, սելավների հետևանքով Հայաստանի գյուղատնտեսությունը տարեկան մի քանի տասնյակ միլիարդ դրամի վնաս է կրում: Հիմնական «գրիերը» գյուղացիներն են, որոնց մեծ մասը կթած է վարկային բեռի տակ:

Համաձայն Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության (ՄԻՆ) 2016թ. տվյալների՝ հանրապետության տարածքի 12%-ը ենթակա է ցրտահարությունների, 15%-ը՝ երաշտի, 17%-ը՝ կարկտահարման: Հայաստանի բոլոր մարզերը խոցելի են հատկապես՝ ցրտահարությունների առաջ: Դրանք հաճախ դիտվում են հանրապետության հովտային գոտիներում՝ Արարատյան հարթավայրում և դրա նախալեռներում, Տավուշում և Սյունիքի հովիտներում: Ամենախոցելին Արարատյան հարթավայրն է, որտեղ ցրտահարության հավանականությունը 45-50% է, միջինը՝ տարեկան 3 անգամ: Լեռնային գոտիներում ցրտահարության դեպքերը այնքան էլ բնորոշ չեն, վերջիններիս վնասի ազդեցությունն էլ նվազագույնի է հասնում՝ տվյալ շրջաններում մրգերի և բանջարեղենի բացակայության պատճառով:

Հայաստանին բնորոշ և առավել հաճախակի կրկնվող տարերային երևույթներից մեկը երաշտն է, որը չոր կլիմայի հետևանք է: Հայաստանի տարածքում ուժեղ երաշտներ դիտվում են Արարատյան հարթավայրում: Այն զգալի է նաև Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի որոշ շրջաններում: Երաշտի հետևանքով բերքի որակն ընկնում է, ավելանում են բույսերի հիվանդությունները, ներմուծվող սննդամթերքի ծավալները, սննդամթերքի արժեքը: Սրա հետևանքով նվազում են գյուղատնտեսության մեջ ներգրավված անձանց եկամուտները՝ միևնույն ժամանակ ազդելով ընդհանուր տնտեսական աճի տեմպերի վրա:

Մյուս կողմից տարածաշրջանը նաև համարվում է աշխարհի կարկտավտանգ տարածքներից մեկը: Կարկուտը մեծ վնաս է հասցնում հատկապես գյուղատնտեսությանը: Հայաստանում կարկտահարության հետևանքով տարեկան ոչնչանում է բուսաբուծական արտադրանքի մոտ 4-5%-ը:

Լուրջ խնդիրներ են ծառայել նաև գյուղատնտեսության տեխնիկական ապահովման և սպասարկման ծառայությունների բնագավառում: Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ավելի քան 95%-ի շահագործման ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր է սարքիության մակարդակը և արտադրողականությունը, հետևաբար՝ բարձր են շահագործման ծախսերը և ծառայությունների սակագները:

Բացի բնակչության վճարունակ պահանջարկի նվազումից, սեփական կերարտադրության կրճատման և ներկրվող կերերի ծավալների կտրուկ սահմանափակման հետևանքով զգալիորեն կրճատվել է անասնապահաբանակը և անասնապահական մթերքների արտադրությունը: Մասնավորապես՝ խիստ նկատելի է գյուղամերձ արտավայրերի գերբեռնվածությունն ու եռոզիան և հեռագնա արտոների սահմանափակ օգտագործումը: Վերջիններս հանգեցնում է լուրջ տնտեսական կորուստների և արտավայրերի դեգրադացման:

Հիմք ընդունելով գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող վերոնշյալ գործոնները՝ մեր հանրապետությունում գերակա խնդիր է դարձել գյուղատնտեսության ապահովագրությունը: Ինչպես նախկին տնտեսակարգի պայմաններում, այնպես էլ հողի սեփականաշնորհումից հետո, գյուղատնտեսության ոլորտում կուտակվել են բազմաթիվ խնդիրներ, որոնք ոչ միայն խոչընդոտում են այս ոլորտի զարգացմանը, այլև ստեղծում են մրցակցության ոչ բավարար մակարդակ:

Հայաստանի Հանրապետությունում գործում է պարտադիր ապահովագրության միայն մեկ տեսակ՝ Ավտոթափաբացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրական ինստիտուտը (ԱԴԴԼ), որը ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ից: Հանրապետության ապահովագրական շուկայի վերահսկողությունը 2006թ. հունվարի 1-ից իրականացնում է ՀՀ ԿԲ-ն, որի կազմում գործում է միասնական ֆինանսական վերահսկողության համակարգը:<sup>5</sup>

Գյուղատնտեսության ապահովագրության ծածկույթի, հնարավոր ծախսերի և պրոդուկտի տեսակի մշակման առումով անհրաժեշտ է ռիսկերի վերաբերյալ կատարել տվյալների հավաքագրում և քարտեզագրում՝ ըստ մարզերի և բերքի տեսակի:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ գյուղատնտեսական ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ գործնական քայլեր դեռևս գրեթե չեն կատարվել, և տվյալ գործընթացի զարգացմանը խոչընդոտող գործոնների բացահայտումը, ծառայացած խնդիրների լուծումը արդիական է և հրատապ:

Ներկայացվել է 10.08.2017թ.  
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.

<sup>4</sup> Հայաստանի տնտեսության տարիական արդյունքները, «Ի-Վի Զոնասայթինգ», Ապրիլ 21, 2016 Երևան

<sup>5</sup> „Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին», ՀՀ օրենք, 18 մայիս 2010թ